ԱԽԱԼՔԱԼԱՔՅԱՆ ՄԻՋԱԴԵՊԸ՝ ՎՐԱՑԱԿԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

# «ՏԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՐԶ ԵՐԵՎՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ԿՐԱԿԵՑ ԻՆՁ ՎՐԱ»

***«Վրաստանի» նախորդ համարում հրապարակված Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի եւ խորհրդարանի նախկին պատգամավոր Սամվել Պետրոսյանի միջեւ Ախալքալաքիում մարտի 26-ին տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ վրացական «Ախալի թաոբա» թերթում տպագրված հոդվածի հայերեն թարգմանական տարբերակը լայն արձագանք առաջացրեց մեր ընթերցողների շրջանում:***

***Իսկ այս օրերին խմբագրությանն հասցեագրված եղան բազում զանգեր եւ էլեկտրոնային հաղորդագրություններ Ախալքալաքից եւ Նինոծմինդայից : Դրանցում հիմնականում խոսքը վերաբերում էր թբիլիսյան PostTV հեռուստաընկերության «Քաղաքական դիրք» հաղորդաշարի ապրիլի 4-ի հաղորդմանը, որտեղ հաղորդաշարի հեղինակ հանրաճանաչ հեռուստալրագրող Շալվա Ռամիշվիլին, Հենզել Մկոյանի հետ հարցազրույցում, անդրադարձավ մարտի 26-ի միջադեպին: «Վրաստանը» ընդառաջելով ընթերցողների ցանկությանը, ներկայացնում է այդ հաղորդման սղագրության հայերեն թարգմանությունը:***



***Շալվա Ռամիշվիլի.*** - Մենք չէինք կարող շրջանցել այն միջադեպը, որը տեղի ունեցավ մի քանի օր առաջ Ախալքալաքիում: Գիտենք, որ կա կոնկրետ հակադրություն Վրաստանի խորհրդարանի ներկայիս մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի եւ Ախալքալաքիի սակրեբուլոյի «Հայրենասերների դաշինքի» անդամ Սամվել Պետրոսյանի միջեւ: Մեր այսօրվա զրուցակիցն է Հենզել Մկոյանը:

***- Պարոն Հենզել, եկեք անմիջապես անցնենք «գործի»: Ողջ Վրաստանը տեսավ Ձեր եւ Սամվել Պետրոսյանի հակադրության կադրերը, որտեղ առկա էր զենք, ու եղան կրակոցներ: Եղան նաեւ որոշ թերթերի եւ հեռուստաալիքների տեսակետները, որոնց, իհարկե, չենք վստահում: Կան հարցեր եւ ուզում ենք ստանալ անկեղծ պատասխաններ Ձեզանից: Եվ ահա, ինչու ենք մենք տրամադրում Ձեզ մեր եթեր: Եթե կարելի է, մանրամասն պատմեք, թե ի՞նչ էր պատահել:***

- Ուզում եմ տեղեկացնել հասարակությանը, որ այս փաստը պատգամավորի նկատմամբ հարձակում էր, իմ նկատմամբ ուղիղ նշանառությամբ՝ օրը ցերեկով, որն էլ ապացուցում են տեսագրությունները: Տեսագրությունից պարզ երեւում է, թե ինչպես է նա երեք անգամ կրակում ինձ վրա: Կա նաեւ եւս 8-10 վկա, որոնց հարցաքննությունները դեռ չեն սկսվել: Հավանաբար, մոտ օրերս նրանք կհարցաքննվեն:

***- Դուք ասում եք, որ դա ինքնապաշտպանություն էր:***

- Այո', հարյուր տոկոսով: Ուզում եմ պատմել, թե որտեղից սկսվեց այս ամենը: 2016 թվականի խորհրդարանական ընտրությունների ժամանակ Սամվել Պետրոսյանը «Վրացական երազանքի» կողմից պարտություն կրեց: Նա իր հնարավորությունների առավելագույնն արեց, բայց հաղթանակի չհասավ, որովհետեւ մենք ստացանք ձայների ճնշող մեծամասնությունը:

2017 թվականին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին նա իր թեկնածությունն առաջադրեց քաղաքապետի պաշտոնում: Ընտրություններն անցան արդարացի, որի մասին նա, իր մի շարք հարցազրույցներում նշեց: Ու այստեղ էլ նա կրկին պարտվեց: Եվ երրորդը, 2018 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ նա կրկին մեր դեմ էր պայքարում: Այդ տեսագրությունն էլ կա, ցանկության դեպքում՝ կարող ենք տրամադրել, որտեղ նա «Միացյալ ազգային շարժում» կուսակցության ներկայացուցիչների հետ կանգնած է ամբիոնի մոտ եւ նրանց ասում է, որ իրենց հետ է: Մենք այդ ժամանակ էլ շատ մեծ տոկոսով հաղթեցինք: Երեւի երեք տարվա ընթացքում պարտությունը նրա մեջ վրեժխնդրություն արթնացրեց, եւ վերջում վրեժը նրան այն աստիճանի հասցրեց, որ դիմեց սպանության փորձի:

Իսկ մինչ այդ, 2019 թվականի հոկտեմբերի 4-ին, նա իր որդու հետ (գիտեք երեւի, որ եթե կռիվը հանկարծակի է պատահում, դրա ներելը հնարավոր է, բայց, երբ մարդը, նախկին ոստիկանապետը, գնդապետն ու նաեւ խորհրդարանի նախկին պատգամավորը) սցենարը նախապես է ծրագրում, մտածում է, թե ինչպես վնասի մարդկանց եւ հաղթի, այդ մարդն արդեն վտանգավոր է, ոչ միայն շրջանի, այլեւ ողջ Վրաստանի համար:

***- Ի՞նչ եք ենթադրում այս ամենից:***

- Կրկնեմ, հոկտեմբերի 4-ին նրա որդին միտումնավոր, ինչպես կինոֆիլմերում է լինում, փակեց եղբորս՝ գործարար Մարտուն Մկոյանի ավտոճանապարհը: Եղբորս մեքենայի ուղղությամբ քարեր նետեցին, Մարտինը արգելակեց մեքենան ու հարցրեց, թե ինչո՞ւ են այդպես վարվում, նա մեքենայի ղեկը մոտ 100 մետր բռնելով տարավ, որ եղբայրս չփախչի ու մեքենայից դուրս գցեց նրան, ով այդ ժամանակ կորցրեց գիտակցությունը:

***- Ինչո՞ւ առաջացավ այս առճակատումը:***

- Քանի որ նա այս տարի, 2020 թվականի ընտրություններին է ուզում պատրաստվել, փորձում է, սադրանքների օգնությամբ, մեզ ներքաշի առճակատման մեջ, որ մենք սխալներ թույլ տանք, որպեսզի հետագայում մեր դեմ օգտագործի ու իբր այդ միջոցներով կարողանա ընտրություններին հաղթել: Ստացած վնասվածքներից եղբորս անհրաժեշտ եղավ Ստամբուլում բուժվել, ընկերն էլ՝ ուղեղի ցնցում ստացավ: Կան համապատասխան փաստաթղթեր: Գործը մինչեւ հիմա դատախազությունում է: Հայցով դիմել է ինչպես մեր, այնպես էլ՝ նրանց կողմը:

Ասեմ նաեւ, որ Սամվել Պետրոսյանի տղան իրականացրեց իրենց ընտանիքի նոր մտահղացումը: Չորս օր առաջ եղբորս որդին, որն ընդամենը 18 տարեկան է եւ սովորում է դպրոցում, մեքենայով անցնում էր եկեղեցու մոտով, լսեց հայհոյանք: Համարեց, որ դա իրեն չի վերաբերում: Երբ նա երկրորդ անգամ պտտվեց նույն տեղով, նրան ասացին. «... լավ է, որ ետ վերադարձար, հենց քեզ էինք հայհոյում»: Իմ եղբորորդու եւ այս տղամարդու միջեւ 50 տարվա տարբերություն կա: Նա իմ եղբորորդուն հարցրեց, թե վերջապես ի՞նչ է ուզում քո հայրը: Այն սրճարանը, որտեղ ընթանում էր խոսակցությունը, իմ տանից 50 մետր հեռավորության վրա է գտնվում: Երբ իմացա, որ վիճաբանում են, տանից հողաթափերով դուրս եկա: Մի քանի րոպեից հետո եկավ ինքը՝ Սամվել Պետրոսյանը: Իր որդուն ասաց, որ ներս մտնի սրճարան, հետո ավելացրեց, որ ինքը դրանց պիտի ոչնչացնի, սպանի: Այս ամենը հաստատում է 10 վկա: Նա սկսեց կրակել ինձ վրա:

***- Նա օդո՞ւմ էր կրակում, թե՝ ուղիղ Ձեզ վրա:***

- Ինչ-որ ասում եմ, ես պատասխանատու եմ իմ ասածի համար: Կան տեսագրություններ, փորձագետներ, վկաներ: Երկու անգամ նա իմ ուղղությամբ կրակեց: Մեկ փամփուշտը ականջիս մոտով անցավ: Իսկ երբ երրորդ անգամ կրակեց, ոստիկանը նրան խանգարեց՝ բռնելով ձեռքը, որ չսպանի ինձ: Պետրոսյանը շարունակում էր չենթարկվել ոստիկանին եւ հինգերորդ փամփուշտը գետնին դիպավ ու ծակեց: Իմ կյանքը ոստիկանը փրկեց:

***- Եվ դուք, ի պատասխան՝ կրակեցի՞ք:***

- Երբ տեսա, որ նա նորից փորձում էր հրազենը փամփուշտով լցնել, ես օգտվեցի իմ պաշտոնական օրենքով թույլ տրված ինքնապաշտպանությամբ եւ օդում կրակեցի: Կա օրենք, թող օրենքն էլ դատի: Ինձանից հետո, մի քանի րոպե նրանք ոստիկաններին էլ էին հակադրվում ու հրում, զուգահեռաբար, հավաքում էին կրակած փամփուշտները: Կան կադրեր: Նախ ի՞նչ իրավունք ունեին հրելու ոստիկաններին ու, եթե ազնիվ են, ինչո՞ւ էին գողավարի հավաքում փամփուշտները:

***- Այժմ ո՞ր փուլում է հետաքննությունը:***

- Ես արդեն տվել եմ ոստիկանությանը ցուցմունքներ:

Մենք ոչինչ չենք արել, բայց «Մթավարի» ալիքը երեք օրվա ընթացքում մեր քաղաքում էր գիշերում, մտնում էին տներն ու հարցազրույց էին պահանջում, բայց ոչ մեկը չէր համաձայնում, մարդիկ էին հավաքում: Եթե Պետրոսյանը «ազգայնա-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՄԱՌՆԵՈՒԼԻ - ԲՈԼՆԻՍԻ

# ԿԱՐԱՆՏԻՆ. ԻՆՉՊԵՍ Է ՓՈԽՎՈՒՄ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԸ

***Արդեն երրորդ շաբաթն է, ինչ Քվեմո Քարթլիի տարածաշրջանի Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների բնակիչներն ապրում են խիստ կարանտինի ռեժիմի պայմաններում: Կարանտինի ռեժիմը նրանց ապրելակերպը լիովին փոխեց: Դպրոցները, որոշ կազմակերպություններ եւ լրատվամիջոցներ, COVID-19-ից պաշտպանվելու նպատակով, անցան հեռավար աշխատանքի: Բանկերում սկսեցին խստորեն հետեւել մարդկանց ելքումուտքին: Թոշակառուների անվտանգությունը պաշտպանելու համար, գյուղերում սկսեցին շրջել բանկի մեքենաները, որոնք բաժանում են թոշակը: Խանութներում սկսեցին ավելի խիստ հետեւել հիգիենայի կանոններին: Ասեմ նաեւ, որ որոշ գյուղերի խանութներ բնակչությանը առաջարկում են անվճար հաց: Զարմանալի է, բայց մեծացավ համացանցից օգտվողների թիվը:***

Սկսեմ նրանից, որ աշակերտների դպրոց չգնալը պատճառ չդարձավ ուսումնական գործընթացից կտրվելու: Նրանց ուսուցիչները դասավանդում են հեռավար անմիջապես բջջային հեռախոսով կամ համակարգիչներով:

Արտակարգ դրության եւ կարանտինի պատճառով, մարդիկ սկսեցին երկար ժամանակ անցկացնել իրենց ընտանիքներում, աշխատել տնամերձ հողամասերում: Հաճախ ենք լսում՝ կորոնավիրուսը բոլորիս փակեց տներում, իրականում հենց այդպես էլ կա, սա ավելի պարզ դարձավ պարետային ժամ հայտարարելուց հետո: Ժամը 21-ից հետո փողոցներում խաղաղ լռություն է. լինի դա գյուղում, թե քաղաքում: Բոլորը տանն են, լսվում է միայն փողոցային շների խուլ հաչոցը: Պարետները ակտիվ շրջում են եւ իրավախախտման դեպքում տուգանում: Մառնեուլիում արդեն ավարտվեց ջերմաչափումների առաջին փուլը. ստուգվել է 105 000 մարդ, նրանցից միայն 55-ն ուներ ջերմություն:

Հետաքրքիր է, թե Շահումյանում, որը Մառնեուլիի ամենամեծ հայաբնակ ավանն է՝ 3000 բնակչով, ինչպե՞ս են հարմարվել կարանտինի պայմաններին, ի՞նչ խնդիրներ ունեն եւ ի՞նչ միջոցառումներ են կազմակերպվում COVID-19-ի դեմ պայքարելու համար: Այս ամենը պարզելու համար մենք զրուցեցինք Արարատ Հակոբյանի հետ, որը Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետի ներկայացուցիչն է Շահումյանում:

- Ամեն ինչ նորմալ է, խուճապ չկա, քաղաքապետարանն արդեն օգնել է ավանի 60 ընտանիքի եւ մոտավորապես այդքանի էլ դեռ կօգնենք: Ջերմաստուգումների առաջին փուլը ավարտվել է եւ հիմա արդեն սկսում ենք երկրորդ փուլը: Պարզվեց, որ միայն մեկն ուներ կասկածելի ախտանշաններ, նրան անմիջապես COVID-19-ի թեստ արեցին, եւ պատասխանը, հուրախություն մեզ, բացասական էր: Խանութներում մթերքի պակաս չունենք, դեղատունն էլ գործում է համարյա շուրջօրյա: Դպրոցներն արդեն անցել են հեռավար ուսուցման,- մեզ պատմեց Արարատ Հակոբյանը:

Իսկ ինչպիսի՞ն է վիճակը Բոլնիսիում:

Այս մունիցիպալիտետի իրավիճակը տարբերվում է Մառնեուլիից, քանի որ այնտեղ գրանցվել են կորոնավիրուսի նոր դեպքեր: Կանխարգելման նպատակով անցած շաբաթ փակվեց Քվեմո Բոլնիսի՝ Քապանակչի գյուղը: Քվեմո Բոլնիսիից 2 կմ հեռավորության վրա է գտնվում հայաբնակ Բոլնիս-Խաչենը, որտեղ հաշվվում է 500 ծուխ: Մեզ հետ զրույցում Բոլնիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավոր այդ գյուղից Լեւոն Մանուկյանը ասում է.

- Ամենակարեւորը գյուղում խուճապ չկա, ժողովուրդը տանն է: Առաջին փուլում բաժանել ենք 250 հաց, 100 ընտանիքի սնունդ (բուսայուղ, ալյուր, մակարոն, քաղցրավենիք): Գյուղում կան մթերային 7 խանութներ, որոնք գործում են: Ուզում եմ անպայման իմանաք, որ Բոլնիսիի քաղաքապետարանը հատուկ մարդ է նշանակել, որն անհրաժեշտության դեպքում, չնայած պարետային սահմանափակումների, օրուգիշերվա պայմաններում կորոնավիրուսով պայմանավորված, գյուղացիների պահանջով կարող է գնալ շրջկենտրոն՝ Բոլնիսի, գնումներ կատարել, դեղամիջոցներ գնել եւ բերել հասցնել խաչենցիներին: Իսկ Քվեմո Բոլնիսիի մուտքն ու ելքը փակված է, մեր գյուղացիներին արգելված է տանից դուրս գալը: Լեւոնը կատակով ավելացրեց նաեւ. «Մառաններս գինի կա, պաշար ունենք, էլ ինչի՞ դուրս գանք»:

Ընդհանուր առմամբ, իրավիճակը հանդարտ է նաեւ Բոլնիսիի երկրորդ հայաբնակ գյուղում՝ Կիանեթիում: Գյուղացիները պաշտպանում են կարանտինի կանոնները, տներից դուրս չեն գալիս եւ սպասում են կարանտինի ավարտին:

- Գյուղում ամեն ինչ լավ է, ախտահանել են, ջերմաչափել, վտանգ չկա: Ներկա պահին սպասում ենք կարանտինի բարեհաջող ավարտին,- ասում է Կիանեթիի դպրոցի փոխտնօրեն Գոհար Ումռոյանը:

*ԷԴԳԱՐ ՄԱՋՄԱՆՅԱՆ*
*(մեր հատուկ թղթակից)*
*Մառնեուլի - Բոլնիսի*

COVID -19. ՀԱՐՑՆՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

# ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ՝ ՀՐԱՏԱՊ ՈՒ ՀՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐԻՆ ԵՐԿՐՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

***Ո՞ր դեպքում է թույլատրվում մեքենա վարելը:***

Ուղեւորատար ավտոմեքենաներին (ներառյալ՝ տաքսիները) երթեւեկությունը թույլատրելի է, եթե փոխադրամիջոցում կա ընդամենը 3 մարդ, այդ թվում՝ 2-ը՝ հետեւի նստատեղում: Արգելվում է երեկոյան 21:00-ից մինչեւ առավոտյան 6:00-ը տեղաշարժվել ինչպես հետիոտն, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցներով:

***Ինչպե՞ս կարող է ավելի քան 3 անդամ ունեցող ընտանիքը մեքենայով ուղեւորվել քաղաքից դուրս:***

Ցավոք, միայն 3 անձի է թույլատրվում մեքենայով երթեւեկել: Այս սահմանափակումը վերաբերում է նաեւ ընտանիքի անդամներին, ներառյալ՝ երեխաներին:

***Ո՞ր դեպքում է թույլատրվում ավելի քան 3 անձի գտնվել հասարակական վայրերում:***

Ավելի քան 3 ֆիզիկական անձանց ներգործությունը նույն վայրում թույլատրելի է միայն տնտեսական գործունեության ընթացքում, ինչպես նաեւ սննդի, բժշկական եւ դեղագործական ապրանքների վաճառքի ժամանակ՝ պարտադիր է պահպանել առողջապահության նախարարության առնվազն 2 մետր սոցիալական հեռավորության պահպանման հանձնարարականը: Այդ հանձնարարականների համաձայն, սահմանափակումը չի տարածվում. 1.բժշկական հաստատություններում, հասարակական հաստատություններում, պաշտպանության ուժերում, հատուկ քրեակատարողական հիմնարկներում, 2.իրավապահ մարմիններում: 3.անձանց հավաքվելը՝ նրանց վստահված գործառույթների կատարման ժամանակ. նաեւ՝ շինարարական-ենթակառուցվածքային աշխատանքներ կատարելու ժամանակ:

***70 տարեկանից անց քաղաքացուն, իրոք, արգելվո՞ւմ է տանից դուրս գալ:***

Այո, 70-ից բարձր քաղաքացիները տնից կարող են դուրս գալ միայն այն դեպքում, եթե նրանք տանը ոչ ոք չունեն, որոնք կարող են նրանց օգնել: Այդ դեպքում միայն նրանք կարող են դուրս գալ սնունդ եւ բժշկական/դեղագործական ապրանքներ գնելու: Նաեւ բուժօգնություն ստանալու համար, որը նրանք չեն կարող ստանալ առանց տնից դուրս գալու:

Սահմանափակումը չի վերաբերում մարդկանց, ովքեր, բուժ-անձնակազմի, առողջապահական ոլորտի ներկայացուցիչներ են:

***Իսկ ո՞վ պետք է օգնի միայնակ՝ 70 տարեկան քաղաքացուն:***

Եթե 70 տարեկանից անց քաղաքացիները միայնակ են, նրանց կօգնեն էկոնոմիկայի նախարարությունը եւ առողջապահության նախարարությունը, ինչպես նաեւ՝ տեղական ինքնակառավարման մարմինները: Այդ դեպքում քաղաքացիները պետք է զանգահարեն թեժ գիծ՝ 144 կամ 110:

***Ի՞նչ է նշանակում լիարժեք կարանտին կամ պարետային ժամ:***

Ամբողջ երկրի տարածքով հայտարարված կարանտինի պայմաններում արգելվում է երեկոյան 21:00-ից մինչեւ առավոտյան 6:00-ը երթեւեկումը ինչպես հետիոտնների, այնպես էլ՝ տրանսպորտային միջոցների պարագայում:

***Պարտադի՞ր է այդ պայմաններում ունենալ անձնագիր:***

Ցանկացած ֆիզիկական անձ պետք է պարտադիր ինքնության փաստաթուղթ կրի:

***Իսկ, ասենք, եթե այդ պահին անձի մոտ անձնագիրը չլինի՞:***

Այդ դեպքում անձը պետք է ունենա որեւէ այլ փաստաթուղթ, որը կարող է հաստատել նրա անձը, օրինակ՝ վարորդական իրավունքը հաստատող վկայական կամ ուսանողական տոմսը, հակառակ դեպքում, ձեզ կտուգանեն 3 հազար լարի:

***Ասացեք խնդրեմ, եթե անչափահասն է խախտում արտակարգ դրության կարգը, այդ դեպքում ո՞ւմ են տուգանում:***

Մինչեւ 16 տարեկան անձի կողմից արտակարգ դրության խախտման ժամանակ պատասխանատու է երեխայի ծնողը կամ՝ երեխայի այլ օրինական ներկայացուցիչը:

***Կարո՞ղ եմ ընտանի կենդանուն զբոսանքի տանել պարետային ժամերի ընթացքում:***

Ոչ: Ընդհանրապես պարետային ժամերի ընթացքում արգելվում է տնից դուրս գալ:

***Երեկոյան 21:00-ից հետո մթերային խանութները եւ դեղատները կգործե՞ն:***

Ժամը 21:00-ից հետո կգործի միայն դեղատունը, որը հասանելի կլինի միայն նրանց, ում թույլատրվում է տեղափոխվել երեկոյան 21:00-ից մինչեւ առավոտյան 6:00-ը (օրինակ՝ ոստիկանության ծառայողներին եւ բժիշկներին):

***Ունեմ տնտեսական գործունեության իրավունք՝ ինչպե՞ս պիտի իմ աշխատողներին տանեմ աշխատանքի վայր:***

Աշխատակիցներին տանից աշխատանքի եւ տուն վերադառնալը դուք եք ապահովելու միկրոավտոբուսով կամ ավտոբուսով, որոնց վրա չի գործում 3 անձի սահմանափակումը: Աշխատակիցների ավտոբուսով կամ միկրոավտոբուսով տեղափոխման համար թույլտվությունը պետք է ստանաք քաղաքապետարաններից:

***Ես տաքսիստ եմ, կարո՞ղ եմ, թե՞ ոչ շարունակել իմ գործունեությունը:***

Այո, առավոտյան ժամը 6:00-ից մինչեւ երեկոյան ժամը 21:00-ն եւ միայն այն դեպքում, եթե մեքենայում կա ընդամենը 3 մարդ, դուք եւ եւս երկուսը՝ հետեւի նստատեղին: Երեկոյան 9:00-ից առավոտյան 6:00-ն ամբողջ երկրում արգելված է տեղաշարժը;

***Տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունք վերապահվո՞ւմ է:***

Տնտեսական բոլոր տեսակի գործունեությունը սահմանափակված է, բացառությամբ.

Բուժհաստատության գործունեության.

Սննդամթերքի/կենդանական կերերի, կենդանական եւ բուսական արտադրանքների, անասնաբուժական դեղամիջոցների, թունաքիմիկատների եւ ագրոքիմիկատների, սերմերի, ինչպես նաեւ դրանց արտադրության, պահեստի, մեծածախ առեւտրի եւ բաշխման, սննդի փաթեթավորման նյութերի/բեռնարկղերի մանրածախ եւ մեծածախ վաճառքի.

Ջրաղացների, հացաբուլկեղենի, կաթի վերամշակման եւ վերամշակող ձեռնարկությունների գործունեության.

Էլեկտրաէներգիայի, բնական գազի, ջրի մաքրման/փոխանցման/բաշխման/մատակարարման, բենզինի, դիզելային, հեղուկացված գազի, ինչպես նաեւ հեռահաղորդակցման, փոստային եւ թափոնների կառավարման ծառայությունների.

Առեւտրական բանկային գործունեության.

Ինքնասպասարկման կրպակների միջոցով ծառայություններ մատուցողների եւ նրանց գործակալների գործունեության.

Վճարային համակարգի օպերատորների գործունեության.

Բանկոմատների, ինքնասպասարկման կրպակների




եւ փոստային տերմինալների շահագործման անհրաժեշտ գործողությունների.

Միկրոֆինանսական կազմակերպությունների գործունեության.

Բանկային/ֆինանսական ապրանքների/ծառայությունների առաքման/իրականացման հեռավոր ուղիներով.

Բժշկական իրերի, դեղագործական ապրանքների արտադրության/բաշխման/վաճառքի.

Գյուղատնտեսական գործունեության եւ անասնապահության/թռչնաբուծության հետ կապված գործողությունների.

Ավտոմեքենաների սպասարկման՝ տաքսիով (Մ 1 կարգի).

Սննդի առաքման ծառայության (այսպես կոչված «Առաքման ծառայություն»).

Անհատական անվտանգության գործողությունների.

Փաստաբանների աշխատանքի.

Ավտոմեքենաների տեխնիկական ծառայություններով զբաղվողների աշխատանքի.

Մամուլի տաղավարների:

Բացի վերոնշյալից, կառավարության որոշմամբ պարբերաբար սահմանվում են լրացուցիչ տնտեսական գործողություններ, որոնք կարեւոր են արտակարգ դրության պայմաններում: Բոլոր փոփոխությունները տեղադրված են օրենսդիր «Մացնե» կայքէջում՝ https://matsne.gov.ge/am/document/search...

Բոլոր նման գործողությունները պետք է իրականացվեն առողջապահության նախարարության հանձնարարականների խստագույն պահպանմամբ:

***Մեր ընտանիքը բաղկացած է 6 հոգուց, խախտո՞ւմ ենք, թե՞ ոչ այդ որոշման կանոնները:***

Իհարկե, ոչ:

***3 հոգանոց սահմանափակումը տարածվո՞ւմ է, արդյոք, միկրոավտոբուսների եւ ավտոբուսների վրա:***

Ամբողջ երկրում հասարակական տրանսպորտը (մետրո, ավտոբուս, գնացք, միջքաղաքային եւ այլն) երթեւեկությունները դադարեցված են մինչեւ կարանտինի վերացում:

Եթե արտակարգ դրության ժամանակ թույլատրված գործունեություն իրականացնող ընկերությունը նախատեսում է աշխատակիցներին տանից աշխատանքի եւ տուն տեղափոխել միկրոավտոբուսի եւ ավտոբուսի միջոցով, ապա դա հնարավոր է քաղաքապետարանից ստացված համապատասխան թույլտվության պարագայում:

***Արդյոք, կանգնեցվո՞ւմ է, թե՞ ոչ տարադրամի փոխանակման կետերի եւ գրավատների աշխատանքը:***

Այո, նրանց գործունեությունը ժամանակավորապես դադարեցված է:

ԱԽԱԼՔԱԼԱՔՅԱՆ ՄԻՋԱԴԵՊԸ՝ ՎՐԱՑԱՑԱՆ ԶԼՄ-ՆԵՐՈՒՄ

# «ՏԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՐԶ ԵՐԵՎՈՒՄ Է, ԹԵ ԻՆՉՊԵՍ ՆԱ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ԿՐԱԿԵՑ ԻՆՁ ՎՐԱ»

(Սկիզբը՝ 5-րդ էջում)

կան» չէ, ինչո՞ւ է «Մթավարի» ալիքը այսքան շահագրգռված:

***- Պարոն Հենզել, Դուք պնդում եք, որ կոնֆլիկտը առաջացել է միայն այն պատճառով, որ Պետրոսյանը մրցակից քաղաքական թիմի ներկայացուցի՞չն է, ասում եք, որ կոնֆլիկտը քաղաքական դրդապատճառների՞ց է բխում:***

- Այո', հարյուր տոկոսով այդպես է: 2016 թվականին, երբ վարչապետ Գիորգի Կվիրիկաշվիլին Ախալքալաքիի կենտրոնում ներկայացնում էր իմ թեկնածությունը, Պետրոսյանը եւ նրա կողմնակիցները պահանջեին, որ իր տղայի թեկնածությունը եւս ներկայացնեն: Ըստ օրենքի, դա չի կարելի, նա համառորեն պահանջում էր, գոռում, որ իր տղայի թեկնածությունն էլ հայտարարի, հակառակ դեպքում ընտրությունները կտապալի: Այս ամենը արձանագրված է տեսագրություններում: Եվ այս մասին համապատասխան գերատեսչությունը տեղեկացված է: Նա պետք է այն ժամանակ պատժվեր, չնայած այդպես չեղավ: Եվ մեծ դեր է խաղում այն փաստը, որ նրա որդին ոստիկանության պետի տեղակալն է: Ս.թ. մարտի 28-ին, միջադեպից հետո, խուզարկության ժամանակ նրանց տնից 14 տեսակի զենք է առգրավվել: Կարո՞ղ եք Վրաստանում մեկ ընտանիք անվանել, ով այդ քանակի զենք է պահում:

Հիմա ես պահանջում եմ խիստ հետաքննել զենքի ծագումը, ոմանք ասում են, որ որոշ զենքեր իրենց են պատկանել եւ ապօրինի բնակիչներից խլել են: Եթե դրա համար չեն պատժվի, ապա իրենք էլ կարող ենք հանձնել:

Անպայման պետք է զենքը բռնագրավվի, քանի որ նա օրը ցերեկով Վրաստանի խորհրդարանի պատգամավորի վրա կրակ է բացել, մահափորձ է կատարել: Ես պահանջում եմ նաեւ, որ Ախալքալաքիի սակրեբուլոյի անդամներն էլ հարցաքննվեն: Նա սակրեբուլոյի «Հայրենասերների դաշինքի» անդամ է, 31 պատգամավորից 5-6-ը ընդդիմադիր միավորման մեջ են: Իմիջիայլոց, Պետրոսյանը սակրեբուլոյի նիստերին մասնակցում էր միշտ գրպանում ունենալով հրազեն: Երբ որ նա ինչ-որ հարցում չի համաձայնում, մարդիկ նրան ասում են, որ ճիշտ չէ, միշտ աշխատում է կոնֆլիկտ առաջացնել: Նրա պատասխանը հետեւյալն է. «Ինը միլիմետրանոցից չե՞ք վախենում»: Իմ պատգամավորական գործունեության 20 տարիների ընթացքում նման բան չեմ տեսել եւ ոչ մի անգամ զենքով խորհրդարան չեմ մտել: Իսկ նա Ախալքալաքիի սակրեբուլոյում 2 զենքով է մտնում, որ ժողովրդին վախեցնի:

***- Ունի՞, արդյոք, զենք կրելու իրավունք:***

- Ունի, բայց պետք է ստուգվեն այդ զենքերը, որն ունի իրավունք, իսկ որը ապօրինի է:

***- Շնորհակալություն, պարոն Հենզել, մենք լսեցին Ձեր տարբերակը եւ անպայման լրագրողական հետաքննություն կանցկացնենք ու կպարզենք ճշմարտությունը:***

- Մեկ անգամ եւս նշեմ, որ ուզում ենք հարցաքննվեն վկաները, ովքեր ներկա են եղել, ուսումնասիրվեն տեսագրությունները, ու դատարանը որոշում կայացնի: Եթե ես մեղավոր եմ, պատրաստ եմ պատասխանատվություն կրել:

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵԼ Է, ԵԹԵ ԱՅՍ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ, ԿՆՇԱՆԱԿԻ, ՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՊԻԿԸ ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԵՆՔ»

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է Հայաստանում կորոնավիրուսով վարակվելու հաստատված դեպքերի վիճակագրությանը, պահպանելով զգուշավոր լավատեսություն:*



- Այսօր ունենք կորոնավիրուսի 28 նոր դեպք՝ 311 թեստավորումից: Առողջացմամբ դուրս է գրվել 27 քաղաքացի: Բուժվածների ընդհանուր թիվը 114 է, հիվանդանոցում գտնվողներինը՝ 758: Բուժառուների (պացիենտ) մոտ 90 տոկոսը նույնիսկ ջերմություն չունի: Ընդհանուր առմամբ, զգուշավոր լավատեսությունը պահպանում ենք: Եթե այս վիճակագրությունը շարունակվի, կնշանակի՝ կորոնավիրուսի պիկը հաղթահարել ենք, եւ այն եղել է մարտի 31-ին,- նշեց Հայաստանի վարչապետը:

- Ցավոք, առավոտյան ունեցանք 1 մահ. 93-ամյա բուժառու, ով տառապում էր նաեւ քաղցկեղով: Ծայրահեղ ծանր վիճակում գտնվում է 8 բուժառու,- նշեց Փաշինյանը:

Երկրի վարչապետի ասածը իր հաստատումը գտավ նաեւ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի խոսքում, ըստ որի՝ Հայաստանում կորոնավիրուսով վարակվածների թվի կրկնապատկման արագությունը նվազել է:

- Եթե օրական տոկոսային աճով ենք նայում, ապա մեզ մոտ վերջին երեք օրերին տոկոսային աճը եղել է 4,6 տոկոս, 6,8 տոկոս եւ 1,3 տոկոս: Կրկնապատկման արագությունը՝ 7 օրը մեկից դարձել է 8 օրը մեկ: Մեր խնդիրն է՝ որքան հնարավոր է, գցել այդ տեմպը,- ասաց Նիկոլ Փաշինյանը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԵՍԱԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԻՆ

*Ապրիլի 10-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, տեսակապի միջոցով, Ռուսաստանի վարչապետ Միխայիլ Միշուստինի, Բելառուսի վարչապետ Սերգեյ Ռումասի, Ղրղզստանի վարչապետ Մուխամեդկալի Աբիլգազիեւի, Ղազախստանի վարչապետ Ասքար Մամինի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Միխայիլ Մյասնիկովիչի հետ, մասնակցեց Եվրասիական միջկառավարական խորհրդի տեսախորհրդաժողովին:*

Տեսախորհրդաժողովին Հայաստանի վարչապետը կարեւորեց նման ձեւաչափով քննարկումների անցկացումը՝ նշելով, որ կազմակերպության աշխատանքը չպետք է ընդհատվի համավարակի պատճառով:

Նա տեսախորհրդաժողովի մասնակիցներին ներկայացրեց Հայաստանում կորոնավիրուսի տարածման վերջին տվյալներն ու դրա դեմ պայքարում իրականացվող միջոցառումները:

- Այս առնչությամբ երկրում իրավիճակը գտնվում է վերահսկողության տակ: Մարտի 16-ից մեզ մոտ գործում է արտակարգ դրության ռեժիմ, իսկ մարտի 24-ից՝ խիստ կարանտին: Ինչպես համավարակի հետ բախված գրեթե բոլոր պետությունները, մենք խիստ սահմանափակումներ մտցրեցինք օդային եւ ցամաքային կապի ոլորտում: Երկրում վարակվածների գերակշռող մեծամասնության մոտ հիվանդությունն ընթանում է շատ թեթեւ, նույնիսկ՝ առանց ախտանշանների: Բայց մենք չենք թուլացնում զգոնությունը, մենք մտադիր ենք առավել արդյունավետ դարձնել համավարակի դեմ պայքարը, մասնավորապես, թեստավորման քանակի մեծացման ճանապարհով,- ասաց վարչապետը:

Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Հայաստանի կառավարության կողմից ընդունվել է 10 ծրագրային փաթեթ, որոնք նպատակ ունեն թեթեւացնել կորոնավիրուսի հետեւանքով ժողովրդի առջեւ ծառացած սոցիալական եւ տնտեսական բեռը:

## ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ՝ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ



*Հայաստանի կառավարության հակաճգնաժամային միջոցառումների շրջանակում արդեն բաշխվել է 3 միլիարդ 670 միլիոն դրամ: Այդ մասին կառավարության նիստում հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ հավելելով, որ սա գործադիրի կողմից նախատեսված աջակցության ռեսուրսների 10 տոկոսից էլ պակաս է:*

Կառավարության ղեկավարը նշեց, որ ամենօրյա ռեժիմով թարմացվում են տվյալները: Մի քանի օրվա բազան կամբողջանա ու ամբողջ օգնությունը, աջակցության փաթեթներն արդեն հասանելի կլինեն քաղաքացիներին, ովքեր շահառու են:

Վարչապետը նշել է, որ այս օրերին կառավարությանը նաեւ բազմաթիվ առաջարկություններ են ներկայացվում:

- Այդ առաջարկների հեղեղից գլխապտույտ կարելի է ստանալ: Ուզում եմ ընդգծել, որ մենք ամենօրյա ռեժիմով աշխատում ենք, կառավարությունը հստակ ռազմավարություն ունի, թե ինչպես է հաղթահարելու ճգնաժամը, իհարկե, մենք կլսենք բոլորին, բայց մեր քայլերը տեղավորվելու են մեր ռազմավարության մեջ, - ասել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետն անդրադարձավ նաեւ՝ բանկերի կողմից քաղաքացիներին վարկային արձակուրդ հայտարարելու թեմային՝ նշելով, որ, Հայաստանում նոր կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով հայտարարված արտակարգ դրության ընթացքում, շուրջ 290 հազար քաղաքացու տրվել է վարկային արձակուրդ՝ 9.3 միլիարդ դրամի չափով:

- Այսօրվա դրությամբ Հայաստանի շուրջ 290 հազար քաղաքացու տրվել է վարկային արձակուրդ՝ 9.3 միլիարդ դրամի չափով: Վարկային արձակուրդ է տրվել նաեւ 5300 իրավաբանական անձի՝ 15.4 միլիարդ դրամի չափով,- նշել է Փաշինյանը:

Հայաստանում կորոնավիրուսի տարածումը կանխելու նպատակով՝ մարտի 16-ից ապրիլի 14-ը հայտարարվել է արտակարգ դրություն: Գործում է խիստ սահմանափակումների ռեժիմ ինչպես գործունեության տարբեր տեսակների, այնպես էլ՝ ազատ տեղաշարժի առումով: Այդ պայմաններում բանկերն ու ֆինանսական տարբեր կազմակերպություններ հայտարարեցին վարկային արձակուրդ տրամադրելու մասին՝ մեկ կամ երկու ամսով:

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՎ ՅՈՒՐԻ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԸ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳՈՐԾՈՎ ՀՐԱՎԻՐՎԵԼ ԵՆ ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ

*Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի կարծիքով, երբ Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանն ու 2016-ին Գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը ներկայանան Ապրիլյան պատերազմի հանգամանքները քննող Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովի նիստին, ապա դա կհամարվի հանձնաժողովի աշխատանքի կուլմինացիա:*



- Հանձնաժողովը լսել է բազմաթիվ մարդկանց եւ հիմա խնդիր է դրել, որպեսզի լսի 2016 թվականի Գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովին: Ես տեղյակ եմ, որ Սերժ Սարգսյանն է հրավիրված հանձնաժողովում հարցերին պատասխանելու: Եվ ես կարծում եմ, որ երբ Սերժ Սարգսյանն ու Յուրի Խաչատուրովը ներկայանան հանձնաժողով, դա արդեն կլինի հանձնաժողովի աշխատանքի կուլմինացիան,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Նա նշել է, որ հանձնաժողովն այս ընթացքում մոտ 25 հազար էջ փաստաթուղթ է ուսումնասիրել, ծավալուն աշխատանք է կատարել: Հիմա աշխատանքի ժամկետը երկարացվել է մինչեւ հունիս ամիսը: Փաշինյանը հույս հայտնեց, որ մինչեւ այդ հանձնաժողովը կկարողանա եզրակացություն անել:

### ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՐԱԿՄԱՆ 937 ԴԵՊՔ, ԲՈՒԺՎԵԼ Է 149, ՄԱՀԱՑԵԼ՝ 12-Ը

***Ապրիլի 10-ին Հայաստանում արձանագրվել է կորոնավիրուսով վարակվելու 16 նոր դեպք: Ապրիլի 10-ի դրությամբ կորոնավիրուսի հաստատված դեպքերի ընդհանուր թիվը 937 է, արձանագրվել է մահվան 12 դեպք: Թեստերից 5144-ը բացասական արդյունք է տվել:***

***Հայաստանում ապրիլի 10-ի ժամը 11:00-ի դրությամբ՝ կորոնավիրուսից ապաքինված բուժառուների թիվն ավելացել է 11-ով եւ բուժվածների թիվը դարձել է 149: Այս պահին փաստացի բուժում է ստանում 777 բուժառու:***

### ՇՆՈՐՀԱՎՈՐԵՑԻՆ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԸ

***Կանանց գնահատելու, նրանց սեր խոստովանելու, մեծարելու եւ ժպիտներ պարգեւելու լավագույն առիթներից մեկը ապրիլի 7-ն էր՝ Մայրության եւ գեղեցկության տոնը:***

***Տոնի առթիվ կանանց շնորհավորեցին Հայաստանի նախագահ Արմեն Սարգսյանը, վարչապետ Նիկոլ Փաշինյանը:***

### ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ՌԴ ՆԱԽԱԳԱՀԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՐՑԵՐ

***Ապրիլի 6-ին Հայաստանի վարչապետը եւ Ռուսաստանի նախագահը հեռախոսով քննարկեցին կորոնավիրուսի դեմ պայքարի հարցերը: Այս համատեքստում Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտնեց ռուսական կողմից ցուցաբերած աջակցության համար: Զրույցի նախաձեռնողը հայկական կողմն էր:***

***Տարածված տեղեկության համաձայն, Վլադիմիր Պուտինը եւ Նիկոլ Փաշինյանը հեռախոսով խոսել են նաեւ երկկողմ համագործակցության արդի հարցերի մասին, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական միության հարաբերությունների մասին: Կողմերը քննարկել են նաեւ Հայաստանին բնական գազի մատակարարման հետ կապված հարցեր: Բացի այդ, կողմերը պայմանավորվել են՝ հետագա շփումների ժամանակացույցի վերաբերյալ:***

### 92 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ ԱՋԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

***Եվրոպական միությունը Հայաստանին կտրամադրի, ընդհանուր առմամբ, 92 մլն եվրո՝ անհետաձգելի եւ կարճաժամկետ կարիքների աջակցության նպատակով: Միջոցները կուղղվեն բժշկական սարքավորումների եւ պարագաների մատակարարմանը, բուժանձնակազմի եւ լաբորատոր աշխատակիցների վերապատրաստմանը եւ գործարար հանրության աջակցությանը, ինչպես նաեւ՝ կորոնավիրուսային բռնկման հետեւանքներից տուժած սոցիալական եւ հումանիտար օգնությանը:***

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏ՝ 86 700 ԸՆՏԱՆԻՔԻ

***Հայաստանում՝ սոցիալական աջակցության ոլորտում նպաստի համակարգում, 2019-ին գրանցված է եղել ավելի քան 105 հազար ընտանիք, նպաստ է ստացել նրանցից 86 հազար 700-ը:***

***Նպաստի միջին չափը կազմել է 31 հազար 350 դրամ: Մյուս դեպքերում եղել է միանվագ, եռամսյակային աջակցություն կամ՝ հրատապ օգնություն:***

***2019-ին, սոցիալական աջակցության ոլորտում, գյուղատնտեսական աշխատանքով զբաղվելու հնարավորություն է ստեղծել 1001 ընտանիքի համար: Սոցիալական օգնության ծրագիրը շարունակվում է:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԱՊՐԻԼ



*12.04.2020 Սուրբ Հարության տոն*

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը կոչվում է նաեւ Զատիկ, որը նշանակում է զատում, բաժանում, հեռացում մեղքերից եւ վերադարձ առ Աստված: Զատիկը թե Հին, եւ թե Նոր Կտակարաններում համարվում է 5 տաղավար տոներից մեկը:

Սուրբ Հարության տոնի նախընթաց երեկոյան եկեղեցիներում մատուցվում է Ճրագալույցի Սուրբ պատարագ, որով սկսվում են զատկական տոնակատարությունները: Առավոտյան եկեղեցիներում կատարվում է ժամերգություն, Անդաստանի արարողություն, ապա մատուցվում Սուրբ պատարագ: Սբ. Հարության տոնին հավատացյալները միմյանց ողջունում են Քրիստոս հարյավ ի մեռելոց ավետիսով, պատասխանում՝ Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի:

Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության՝ Սբ. Զատկից սկսած հիսուն օրերը մինչեւ Հոգեգալուստ (Պենտեկոստե) Հայ Առաքելական եկեղեցում կոչվում են Հինունք կամ Հինանց շրջան՝ նվիրված Տիրոջ Հարության եւ Համբարձման խորհրդին: Այդ պատճառով ամբողջ շրջանը կոչվում է Տերունի: Հինանց շրջանն ավարտվում է Հոգեգալստյան տոնով (այս տարի՝ մայիսի 11-ին): Համաձայն եկեղեցու կանոնների՝ բոլոր հիսուն օրերն ուտիք են, այսինքն՝ այս շրջանում չկան պահոց օրեր եւ թույլատրելի են բոլոր կերակրատեսակները:

*18.04.2020 Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օր*

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

## ԱԳՐԱՐԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԸ ՓԱԿՎԵՑԻՆ

*Կորոնավիրուսի կանխման միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշման համաձայն, ապրիլի 7-ից Թբիլիսիում ժամանակավոր փակվում են ագրարային շուկաները:*

Ինչպես նշեց Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, ագրարային շուկաները կունենան աշխատանքը շարունակելու հնարավորություն, սակայն անհրաժեշտ կլինի հաշվի առնել այն հանձնարարականները, որոնք հայտնի են հանրությանը:

- Այսօր բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարը մանրամասն խոսել է այն հարցի շուրջ, թե կոնկրետ ինչ միջոցներ պետք է ձեռնարկվեն, ինչ պետք է անեն տեղում աշխատող մարդիկ, ինչպես պետք է պաշտպանված լինեն նրանց անվտանգությունը եւ գնորդների առողջության անվտանգությունը: Պետք է իրականացվեն կանխարգելիչ միջոցառումներ, ախտահանման աշխատանքներ, պետք է պաշտպանված լինի սոցիալական հեռավորությունը,- հայտարարել է Կախա Կալաձեն:

## ՄԵՐ ԹԱՏՐՈՆԻ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԸ. Ս.Թ. ԱՊՐԻԼԻ 10


10.04.2020թ.

Տեւական ընդմիջումից հետո «Վրաստանը» շարունակում է Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի նոր, ժամանակակից շենքի շինարարության ընթացքը վավերացնող լուսանկարների հրապարակումը: Այս համարում ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ապրիլի 10-ի լուսանկարը, որից երեւում է, որ շենքի շինարարությունը, նույնիսկ ներկա ճգնաժամային պայմաններում, շարունակվում է արագ տեմպերով:

Հիշեցնենք, որ մեր թատրոնի նոր շենքի շինարարությունն իրականացվում է Բիձինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամի տրամադրած շուրջ 19 միլիոն լարիի ֆինանսավորմամբ:

Ծրագրված է թատրոնի շենքի շինարարությունն ավարտել 2020 թվականին:

*Լուսանկարը՝ ԳԱՐՐԻ ՄԱՆՈՅԱՆԻ*

ՍՊՈՐՏ

## ՖԻՖԱ-Ի ՆՈՐ ՍԱՆԴՂԱԿՈՒՄ ԹԵ՛ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԹԵ՛ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆԵՑԻՆ ԴԻՐՔԵՐԸ

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային հերթական աղյուսակը, որը սկզբունքորեն չի տարբերվում նախորդ սանդղակից:

Վրաստանի ազգային ընտրանին, նախորդ սանդղակի օրինակով, զբաղեցրել է 91-րդ տեղը, իսկ Հայաստանի հավաքականը՝ 102-րդը:

Համաշխարհային դասակարգման ցուցակը շարունակում է գլխավորել Բելգիայի հավաքականը: Լավագույն հնգյակում բելգիացիներին հաջորդում են հարեւան Ֆրանսիան, աշխարհի հնգակի չեմպիոն Բրազիլիան, Անգլիան, Ուրուգվայը:

## ՏՈԿԻՈՅԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐԵՐԸ ԿԵԶՐԱՓԱԿՎԵՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻՆ

*Տոկիոյի 32-րդ ամառային օլիմպիական խաղերի քվոտաների խաղարկումը կավարտվի 2021 թվականի հունիսին:*

Այս մասին հայտնում է Միջազգային օլիմպիական կոմիտեն: Այս կամ այն մարզաձեւերի միջազգային ֆեդերացիաները կարող են փոփոխել որակավորման մրցաշարերի ժամկետները, սակայն չեն կարող ավելի ուշ անցկացնել դրանք, քան ՄՕԿ-ի նշած վերջնաժամկետը՝ 2021 թվականի հունիս ամիսը:

Մարտի 24-ին հայտնի դարձավ, որ Տոկիոյի 32-րդ ամառային օլիմպիական խաղերը հետաձգվել են: ՄՕԿ-ի նախագահ Թոմաս Բախը եւ Ճապոնիայի վարչապետ Սինձո Աբեն հեռախոսազրույց են ունեցել, եւ վարչապետի առաջարկից հետո Բախն իր համաձայնությունն է տվել խաղերը մեկ տարով հետաձգելուն: Օլիմպիական խաղերը կպահպանեն իրենց անվանումը՝ Տոկիո-2020: Դրանք կմեկնարկեն 2021 թվականի հունիսի 23-ին եւ կեզրափակվեն օգոստոսի 8-ին:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Սեւծովյան քաղաք: 5.Գերմանական օծանելիք, որը թարգմանաբար նշանակում է Քյոլնի ջուր: 10.Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս ... Առաջին: 11.Ավտոմեքենայի տակ գցել, ...ի ենթարկել: 12.Ցուցական դերանուն: 13.Փող, գումար: 14.Լեռնանցք Արցախում: 15.Հիտլերի կինը՝ ... Բրաուն: 17.Լեհ պարոն: 18.Ֆրանսիական ծովափնյա քաղաք: 20.Լրիվությամբ, ամբողջությամբ: 24.Խաղողի վազը: 25.Խաղաթղթի տեսակ: 27.Հնդկաստանի վարչապետ Ինդիրա ...: 29.Նիհար, լղլղոտ մարդ: 31.Զապաեւի գրդացրորդուհին: 32.Գյուղացու հագուստ: 33.Գետի ճյուղավորումը գետաբերանի մոտ: 35....-մոնղոլական արշավանքներ: 36.Ճաշի համեմունք: 37.«Ինձ»-ը արեւմտահայերենում: 38.Վանքային համալիր Հայաստանի Սյունիքի մարզում: 40.«Չորսի սրտերը» վիպակի հեղինակ Մարկ ...: 42.Հյութի տեսակ: 45.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 46.Վրաստանում ապրող ժողովուրդ: 47.Ծովինար աստվածուհու անուններից: 49.Օպերային երգիչ, հայ անվանի գրող Նար-Դոսի որդին՝ ... Հովհաննիսյան: 52.Սեղանի խաղ: 53.Բայի տեսակ: 56.Սովորող, մոնթ: 58.Թուրքիայում լույս տեսնող պարբերական: 59.Ծխախոտի հումքը: 60.Համադասական շաղկապ: 61.Քարերի վրա աճող, անարմատ բուսատեսակ: 62.Ոդիսեւսի կղզին:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Հայոց Բագրատունի թագավոր: 3.Արցախյան գետ: 4.Ոչ քնած, զարթուն: 5.Լեռնանցք Արցախում: 6.Համաստեղի ստեղծագործություններից՝ «... էն օրերուն»: 7.Հայկական կարմիր ներկը: 8.Լեռ Պատմական Հայաստանում: 9.Ծառի տեսակ: 16.Օլիմպիական խաղերի մասնակից հայոց թագավոր: 17.Չինական արջ: 19.Գրական ստեղծագործության տեսակ: 21.Ցուցական դերանուն: 22.Վարչական շրջան Երեւանում՝ ...-Սեբաստիա: 23.Հողի մեջ եղած կարտոֆիլի պտուղը: 26.Ֆրանսիացի գրող: 27.Վահան Տերյանի ծննդավայր գյուղը: 28.Տեսնել, ուշադրություն դարձնել: 30.Լեռնագագաթ Հայաստանում: 32.... ու պատրաստ: 34.Գյուղատնտեսական գործիք: 39.Աֆրիկյան պետություն: 41.Նարեկացու «Մատյան ողբերգությունը» հայերիս մոտ: 43.Հրազդան գետը Խ.Աբովյանի «Վերք Հայաստանի»-ում: 44.Հանրահայտ քանդակագործ ... Հարությունյան: 48.Տրանսպորտային ճանապարհ: 50.Հեթանոսական տաճար Հայաստանում: 51.Ցուցական դերանուն: 54.Ֆրանսիայի ազգային հերոս Ժաննա դը ...: 55.Միջատ, սարդ: 57.Վիրահայ գրող Վիկտոր Հովսեփյանի մանկական ժողովածուն՝ «..., ..., կրակ տուր ինձ»:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Յաթաղան: 9.Ապրիլ: 10.Տեսք: 11.Ստնդիաց: 13.Իննոց: 16.Ավե: 17.Ռուր: 19.Բյուջե: 22.Կուզիկ: 24.Ծրագիր: 25.Կոմս: 27.Լոլիտա: 29.էնթոնի: 32.Լայզա: 33.Պոթոսի: 35.Փշոտ: 38.Ռուս: 40.Աքացի: 41.Իմիջ: 44.Նոքա: 47.Աբե: 48.Ասեղ: 50.Միստր: 51.Կով: 52.Թո: 53.Նար: 54.Շվի: 55.Ասես:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Յախտա: 2.Գարդե: 3.Պատառ: 4.Շաքի: 5.Կրոն: 6.Ելեց: 8.Նեցուկ: 12.Նվազ: 14.Նայա: 15.Ողջի: 18.Սկոտ: 19.Բրոնզ: 20.Ուգրո: 21.Երեւի: 23.Իկիտոս: 26.Մալի: 28.Ոլոռ: 29.էյր: 30.Թափք: 31.Նվոց: 34.Թուրքիա: 36.Շանս: 37.Տիտղոս: 39.Շիբ: 42.Մարշ: 43.Ձեկի: 45.Ոմն: 46.Ասր: 48.Ավա: 49.Եթե:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445